Արձանագրություն N 2

**«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-18/08» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

ք.Երևան, Վրացյան 73,
«Կրթական տեխնոլոգիաների
ազգային կենտրոն» ՊՈԱԿ

03.10.2018թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովը նախագահող՝ Արմեն Կուլախսզյանը, հանձնաժողովի անդամ՝ Հայկ Թադևոսյանը, քարտուղար Լիլիթ Գևորգյանը և «Լամեքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Սուրեն Աղյանը:

1. **Տեղեկություններ հայտերի բացման մասին**

Հայտերը բացվել են հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին: Հանձնաժողովը նախագահ Ա. Կուլախսզյան հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ մեկ թվով արտահայտված՝ 3000000 (երեք միլիոն) ՀՀ դրամ:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին**

Հանձնաժողովի քարտուղար Լ. Գևորգյանը հայտարարեց, որ հայտ է ներկայացրել երկու մասնակից և հանձնաժողովը նախագահող Ա.Կուլախսզյանին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտը.

*1/ «Հոթել Աղվերան» ՓԲԸ – ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Արզական, Անտառային 1, հեռ. 091 22 40 54, էլ. փոստ info@aghveranhotel.am*

*2/ «Լամեքս» ՍՊԸ – ՀՀ, ք. Արմավիր, Երևանյան 4/15, հեռ. 055 95 95 85, էլ. փոստ lamexllc@gmail.com*

3. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

**«Հոթել Աղվերան» ՓԲԸ՝**

*ա/ հայտը պարունակող ծրարը կազմված և ներկայացված է սահմանված կարգին համապատասխան, -* ***բավարար***

*բ/ առկա են հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան –****բավարար***

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 2, դեմ – 0:*

**«Լամեքս» ՍՊԸ՝**

*ա/ հայտը պարունակող ծրարը կազմված և ներկայացված է սահմանված կարգին համապատասխան, -* ***բավարար***

*բ/ առկա են հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան –****բավարար***

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 2, դեմ – 0:*

4. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

1/ **«Հոթել Աղվերան» ՓԲԸ՝ 2904000** (երկու միլիոն ինը հարյուր չորս հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ:

Գինն առանց ԱԱՀ՝ 2420000 (երկու միլիոն չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

2/ **«Լամեքս» ՍՊԸ՝ 2878000** (երկու միլիոն ութ հարյուր յոթանասունութ հազար) ՀՀ դրամ: Մասնակիցն ԱԱՀ վճարող չէ:

5. **Մասնակիցների կողմից համապատասխան տեղեր զբաղեցնելու վերաբերյալ**

Հանձնաժողովը որոշեց՝

**Առաջին տեղ** զբաղեցնող մասնակից ճանաչել **«Հոթել Աղվերան» ՓԲԸ**-ին:

**Երկրորդ տեղ** զբաղեցնող մասնակից ճանաչել **«Լամեքս» ՍՊԸ**-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0:*

### 6. Առաջին տեղ մասնակիցների կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց ոչ ուշ քան հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ծանուցել **«Հոթել Աղվերան» ՓԲԸ**-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-18/08» ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0:*

### 7. Տեղեկություններ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում կատարելու վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց ոչ ուշ քան հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-18/08» ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0:*

### 8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-18/08» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել 2018թ. հոկտեմբերի 9-ին ժամը 12:00-ին, հասցեն՝ ք. Երևան, Ս. Վրացյան 73 հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0:*

Հանձնաժողովը նախագահող՝ ______________________ Ա. Կուլախսզյան

անդամներ՝ ______________________ Հ. Թադևոսյան

քարտուղար՝ ______________________ Լ. Գևորգյան